ՀԱՎԵԼՎԱԾ 3
«Հայաստանի Հանրապետության՝
«Եվրասիական տնտեսական միության մասին»
2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին
միանալու մասին» պայմանագրի

Պայմաններ և անցումային դրույթներ

I. Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի անդամներ նշանակելու հետ կապված հարցեր

1. Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի անդամների առաջին նշանակման ժամանակ նրանք իրականացնում են իրենց գործառույթները մինչև Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից մինչև Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի ուժի մեջ մտնելը նշանակված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի անդամների լիազորությունների ժամկետի ավարտը, ինչպես սահմանված է Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 99-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ պարբերությամբ:

Սույն կետի առաջին պարբերությունում նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայում ներկայացված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի երեք անդամներով, որոնք ունեն մեկ ձայն՝ առանց նրանց համար իրավասության ոլորտների ամրագրման:

II. Ներմուծման մաքսատուրքերի (այլ տուրքերի, հարկերի և գանձումների, որոնք ունեն համարժեք գործողություն) և յուրահատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի գումարների մուտքագրման և բաշխման հետ կապված հարցեր

2. Ներմուծման մաքսատուրքերի (այլ տուրքերի, հարկերի և գանձումների, որոնք ունեն համարժեք գործողություն) գումարների մուտքագրման և բաշխման կարգի, դրանք անդամ պետությունների բյուջե փոխանցման մասին արձանագրությունը (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 5-րդ հավելված) և յուրահատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերի մուտքագրման և բաշխման մասին կանոնակարգը (2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հավելվածի հավելված) Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) ուժի մեջ մտնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

III. Մաքսային իրավահարաբերությունների հարցեր

Մաքսային ոլորտում գործունեություն իրականացնող անձանց և այլ անձանց մասով

3. Մաքսային միջնորդները (բրոքերները), մաքսային փոխադրողները, մաքսային պահեստներում պահպանում իրականացնող անձինք, մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում անմաքս առևտրի խանութներ հիմնադրող անձինք, Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից ճանաչվում են որպես համապատասխանաբար մաքսային ներկայացուցիչներ, մաքսային փոխադրողներ, մաքսային պահեստների սեփականատերեր, առանց տուրքերի առևտրի խանութների սեփականատերեր և իրավունք ունեն գործունեություն ծավալել մաքսային ոլորտում մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված պայմաններով.

մաքսային միջնորդները (բրոքերները), մաքսային պահեստներում պահպանում իրականացնող անձինք, անմաքս առևտրի խանութներ հիմնադրող անձինք՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 18 ամսվա ընթացքում;

մաքսային փոխադրողները՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում:

Մաքսային ներկայացուցիչները, մաքսային փոխադրողները, մաքսային պահեստների սեփականատերերը, ժամանակավոր պահպանման պահեստների

սեփականատերերը, լիազորված տնտեսական օպերատորները Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից ստեղծվում են Հայաստանի Հանրապետությունում և իրավունք ունեն գործունեություն իրականացնել մաքսային գործի ոլորտում այն պայմաններով, որոնք սահմանվել են «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրք) ամբաժանելի մաս հանդիսացող Մաքսային միության մաքսային օրենսգրքով, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող այլ միջազգային պայմանագրերով և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ ակտերով, առանց մաքսուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրման, որը նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ ենթակետով, 19-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 39-րդ հոդվածի 1-ին ենթակետով, և (կամ) առանց իր քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրման պայմանագրի տրամադրման, որը նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 24-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 24-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, 29-րդ հոդվածի 2-րդ ենթակետով.

մաքսային ներկայացուցիչները, մաքսային պահեստների սեփականատերերը, ժամանակավոր պահպանման պահեստների սեփականատերերը՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 18 ամսվա ընթացքում;

մաքսային փոխադրողները և լիազորված տնտեսական օպերատորները՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում:

4. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում ստեղծված մաքսային փոխադրողները իրավասու են իրականացնել մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների փոխադրում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում Մաքսային միության մաքսային օրենսգրքով, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերով և այլ ակտերով սահմանված պայմաններով առանց Մաքսային միության մաքսային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան իրենց կարգավիճակը հաստատելու և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ձևավորվող մաքսային փոխադրողների ընդհանուր ռեեստրում նշված մաքսային փոխադրողների ընդգրկման մասին տեղեկության առկայության պայմանով:

Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները Հայաստանի Հանրապետությունում ստեղծված մաքսային փոխադրողների ռեեստրները ներկայացնում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ մաքսային փոխադրողների ընդհանուր ռեեստրի ձևավորման համար:

5. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ, 19-րդ, 24-րդ, 29-րդ և 39-րդ հոդվածների դրույթները մաքսային տուրքերի, հարկերի վճարման

ապահովման տրամադրման և քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրման պայմանագրի առկայության պայմանով մաքսային ներկայացուցիչների ռեեստրում, մաքսային փոխադրողների ռեեստրում, մաքսային պահեստների ռեեստրում իրավաբանական անձանց ընդգրկելու և իրավաբանական անձանց լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի տրամադրման մասով Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտնում՝

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 13-րդ, 24-րդ և 29-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 18 ամսվա ընթացքում;

Մաքսային միության մաքսային օրենսգրքի 19-րդ և 39-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում:

Մաքսային գործողությունների իրականացման առանձնահատկություններին առնչվող մասով

6. Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ներքո գտնվող և մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը մաքսային մարմինների պատասխանատու պահմանման ներքո դրված ապրանքները Պայմանագրի ուժի մետ մտնելու օրվանից համարվում են ժամանակավոր պահպանման ներքո, և այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն հավելվածի 7-րդ կետը:

7. Սույն հավելվածի 6-րդ կետում նշված ապրանքների ժամանակավոր պահպանման ժամկետը հաշվվում է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

8. Հայաստանի Հանրապետությունում մաքսային հսկողության ներքո գտնվող և մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը մաքսային մարմինների պատասխանատու պահմանման ներքո դրված ապրանքների առնչությամբ մաքսային հռչակագիրը պետք է տրվի մաքսային մարմնին մինչև Պայմանագրի ուժի մետ մտնելու օրվանից հաշվվող ժամանակավոր պահպանման ժամկետի ավարտը:

9. Այն ապրանքները, որոնց առնչությամբ մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից ընդունվել է մաքսային հռչակագիրը, ենթակա են «հայտարարագրված» մաքսային ռեժիմի տակ դրվելուն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններով մաքսային մարմնի կողմից այդ մաքսային հռչակագրի ընդունման օրվա դրությամբ:

Մաքսային հսկողությամբ ապրանքների փոխադրման առանձնահատկություններին առնչվող մասով

10. Այն ապրանքների առնչությամբ, որոնց համար Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը ընդունված են տարանցիկ հռչակագրերի գործառույթ իրականացնող փոխադրման ամփոփաթերթ, մաքսային տարանցման թույլտվության տրամադրումը իրականացվում է, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքով մաքսային հսկողության ներքո փոխադրումն իրականացվում և ավարտվում է Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից այդ փոխադրման ամփոփաթերթի ընդունման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

11. Հայաստանի Հանրապետության տարածքով մաքսային հսկողությամբ ապրանքների տեղափոխումը, որոնց առնչությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի կողմից մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը տրամադրվել է տարանցման թույլտվություն իրականացվում և ավարտվում է մաքսային տարանցման թույլտվության տրամադրման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

Ապրանքների կարգավիճակի և մաքսային ընթացակարգերի մասով

12. Հայաստանի Հանրապետությունում գտնվող և մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը «ներմուծում՝ ազատ շրջանառության համար», «վերաներմուծման» և «սեփականության իրավունքի հրաժարման՝ հօգուտ պետության» մաքսային ռեժիմների տակ դրված ապրանքները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից համարվում են դրված համապատասխանաբար ներքին օգտագործման, վերաներմուծման և սեփականության իրավունքի հրաժարման՝ հօգուտ պետության համար թողարկման մաքսային ընթացակարգերի տակ և ճանաչվում են որպես Եվրասիական տնտեսական միության ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները:

13. Թեթև ավտոմեքենաները և շարժիչով այլ տրանսպորտային միջոցները, որոնք դասակարգվում են Եվրասիական տնտեսական միության Արտաքին տնտեսական գործունեության միասնական առևտրային անվանակարգի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերում, ներմուծվում են Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից և Պայմանագրի ստորագրումից հետո դրվում են «ազատ շրջանառության» մաքսային ռեժիմի կամ ներքին օգտագործման համար թողարկման մաքսային ընթացակարգի տակ, որոնց առնչությամբ մաքսային տուրքերը վճարվել են թեթև ավտոմեքենաների և շարժիչով այլ տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնք դասակարգվում են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերում, Եվրասիական տնտեսական

միության Միասնական մաքսային սակագնով (ԵԱՏՄ ՄՄՍ) սահմանված դրույքաչափերից տարբերվող դրույքաչափերով, Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում ճանաչվում են որպես օտարերկրյա ապրանքներ՝

մինչև մաքսատուրքերի վճարումը մաքսատուրքերի վճարված գումարների և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերում դասակարգվող թեթև ավտոմեքենաների և շարժիչով այլ տրանսպորտային միջոցների նկատմամբ ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի գումարների տարբերության չափով,

Հայաստանի Հանրապետության կողմից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերում դասակարգվող թեթև ավտոմեքենաների և շարժիչով այլ տրանսպորտային միջոցների նկատմամբ ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերի կիրառումից 3 տարվա ընթացքում:

Սույն կետի գործողությունը չի տարածվում սույն կետի առաջին պարբերությունում նշված ապրանքների նկատմամբ, որոնց առնչությամբ մաքսատուրքերը վճարված են ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերով:

14. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում «արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են արտահանման մաքսային ընթացակարգի տակ գտնվող ապրանքներ և դրանց նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները:

15. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում «վերամշակման համար ժամանակավոր ներմուծման» և «վերամշակման համար ժամանակավոր արտահանման» ռեժիմների տակ դրված ապրանքները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են համապատասխանաբար մաքսային տարածքում վերամշակման, մաքսային տարածքից դուրս վերամշակման մաքսային ընթացակարգերի տակ դրված: Այդ ապրանքների, ինչպես նաև այն ապրանքների առնչությամբ, որոնք ստացվել են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը այդ ապրանքների վերամշակման գործողությունների կատարման արդյունքում, Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն հավելվածի 16-20-րդ կետերը:

16. Սույն հավելվածի 15-րդ կետում նշված մաքսային ընթացակարգերը գործում են մինչև համապատասխան մաքսային ռեժիմների տակ ապրանքների դնելու ժամանակ սահմանված ժամկետների ավարտը՝ հաշվի առնելով ապրանքների վերամշակման ժամկետների երկարաձգման հնարավորությունը

Մաքսային միության մաքսային օրենսգրքի համապատասխանաբար 243-րդ և 256-րդ հոդվածներով նախատեսված ժամկետների սահմաններում:

17. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության տարածքից Մաքսային միության անդամ պետություններից մեկի տարածք արտահանված ապրանքների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմը դադարում է գործել Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից: Այդ մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքները, ինչպես նաև այն ապրանքները, որոնք ստացվել են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը այդ ապրանքների վերամշակման գործողությունների կատարման արդյունքում, Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

18. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Մաքսային միության անդամ պետությունների տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք արտահանված ապրանքների նկատմամբ Մաքսային միության անդամ պետություններում կիրառվող մաքսային տարածքից դուրս վերամշակման մաքսային ընթացակարգերը դադարում են գործել Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից: Այդ մաքսային ընթացակարգերի տակ դրված ապրանքները, ինչպես նաև այն ապրանքները, որոնք ստացվել են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը այդ ապրանքների վերամշակման գործառնությունների կատարման արդյունքում, Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

19. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Մաքսային միության անդամ պետությունների տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմը դադարում է գործել Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից: Այդ մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքները, ինչպես նաև այն ապրանքները, որոնք ստացվել են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը այդ ապրանքների վերամշակման գործառնությունների կատարման արդյունքում, Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

20. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Մաքսային միության անդամ պետությունների տարածքում վերամշակման համար այնտեղ արտահանելու նպատակով երրորդ երկրների տարածքից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմը դադարում է գործել առանց այդպիսի ապրանքները և այդ ապրանքների վերամշակման գործառնությունների կատարման արդյունքում ստացված ապրանքները Մաքսային միության մաքսային օրենսգրքի մաքսային ընթացակարգերի տակ դնելու՝ պայմանով, որ «ժամանակավոր ներմուծում՝

վերամշակման համար» մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքների վերամշակման նյութերը մինչև ապրանքների վերամշակման ժամկետի լրանալը, բայց ոչ ուշ, քան 2016թ. հունվարի 1-ը ճանաչվեն Հայաստանի Հանրապետության ծագման ապրանքներ՝ «Անկախ պետությունների համագործակցությունում ապրանքների ծագման երկրի որոշման կանոնների մասին» համաձայնագրով սահմանված բավարար վերամշակման չափանիշներին համապատասխան:

21. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Մաքսային միության անդամ պետություններում Հայաստանի Հանրապետության տարածքից ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսային տարածքում վերամշակման մաքսային ընթացակարգերը դադարում են գործել մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը: Այդ մաքսային ընթացակարգերի տակ դրված ապրանքները, ինչպես նաև այն ապրանքները, որոնք ստացվել են մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը այդ ապրանքների վերամշակման գործառնությունների կատարման արդյունքում, Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

22. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում «ներմուծում մաքսային պահեստ» կամ «ներմուծում ազատ մաքսային պահեստ» մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են մաքսային պահեստի մաքսային ընթացակարգի տակ դրված ապրանքներ, բացառությամբ արտահանման մաքսային ընթացակարգին համապատասխան արտահանման համար նախատեսված ապրանքների, և այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն հավելվածի 23-րդ կետը:

23. Արտահանման մաքսային ընթացակարգին համապատասխան Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման համար նախատեսված և մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը մաքսային պահեստ կամ ազատ մաքսային պահեստ ներմուծման մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքները պահվում են մաքսային պահեստներում Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից 6 ամսվա ընթացքում:

Մաքսային պահեստի մաքսային ընթացակարգը գործում է մինչև ապրանքները «ներմուծում մաքսային պահեստ» կամ «ներմուծում ազատ մաքսային պահեստ» ռեժիմների տակ դրվելու ժամանակ սահմանված պահպանման ժամկետների լրանալը՝ հաշվի առնելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 231-րդ հոդվածով որոշված ժամկետների սահմաններում դրանց երկարաձգման հնարավորությունը:

24. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր

արտահանում» մաքսային ռեժիմների տակ դրված ապրանքները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են համապատասխանաբար ժամանակավոր արտահանման և ժամանակավոր ներմուծման (թույլտվության) մաքսային ընթացակարգերի տակ դրված ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն կետի 2-րդ և 3-րդ պարբերությունները:

Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքների նկատմամբ կիրառվում է մաքսատուրքերի, հարկերի վճարումից ամբողջական պայմանական ազատում:

Ժամանակավոր ներմուծման (թույլտվության) մաքսային ընթացակարգը գործում է մինչև «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի տակ ապրանքները դնելու ժամանակ սահմանված ժամանակավոր ներմուծման ժամկետների լրանալը՝ հաշվի առնելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 280-րդ հոդվածով որոշված ժամկետների սահմաններում դրանց երկարաձգման հնարավորությունը:

Ժամանակավոր արտահանման մաքսային ընթացակարգը գործում է մինչև «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմի տակ ապրանքները դնելու ժամանակ սահմանված ժամանակավոր արտահանման ժամկետների լրանալը՝ հաշվի առնելով Մաքսային միության մաքսային օրենսգրքի 288-րդ հոդվածով որոշված ժամկետների սահմաններում դրանց երկարաձգման հնարավորությունը:

Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ժամանակավոր ներմուծման (թույլտվության) կամ ժամանակավոր արտահանման մաքսային ընթացակարգերի գործողությունը այն ապրանքների նկատմամբ, որոնք մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը ներմուծվել (արտահանվել) են Հայաստանի Հանրապետություն Մաքսային միության անդամ պետություններից և Մաքսային միության անդամ պետություններ Հայաստանի Հանրապետությունից, դադարում է և այդպիսի ապրանքները ձեռք են բերում Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակ:

25. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում «վերաարտահանում» մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են «վերաարտահանում» մաքսային ռեժիմի տակ դրված ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները:

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից «վերաարտահանում» մաքսային ռեժիմի տակ դրված են ճանաչվում այն ապրանքները, որոնք մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմին համապատասխան ապրանքների վերամշակման գործողությունների

կատարման արդյունքում ստացված վերամշակման նյութերի արտահանման նպատակով Հայաստանի Հանրապետությունում դրվել են «վերաարտահանում» մաքսային ռեժիմի տակ:

26. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետությունում «ոչնչացում» և «ներմուծում անմաքս առևտրի խանութ» մաքսային ռեժիմների տակ դրված ապրանքները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են համապատասխանաբար ոչնչացման և անմաքս առևտրի մաքսային ընթացակարգերի տակ դրված ապրանքներ: Այդ ապրանքների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի և այլ ակտերի դրույթները՝ հաշվի առնելով սույն հավելվածի 27-րդ կետով նախատեսված դրույթները:

27. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված անմաքս առևտրի խանութներում դեպի Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն մեկնող օդանավերի ուղևորներին, վերջիններիս կողմից իրենց վայրեջքի կտրոնները ներկայացնելուց հետո, թույլատրվում է այդ թվում իրացնել.

անմաքս առևտրի մաքսային ընթացակարգի տակ դրված օտարերկյա ապրանքներ՝ անմաքս առևտրի խանութի սեփականատիրոջ կողմից ներմուծման մաքսատուրքի վճարման պայմանով և դրա բաշխմամբ,

անմաքս առևտրի մաքսային ընթացակարգի տակ դրված Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է պարտավորություն բացառել անմաքս առևտրի մաքսային ընթացակարգի տակ դրված ալկոհոլային արտադրանքի և գարեջրի, ծխախոտի և ծխախոտային արտադրանքների իրացումը այնպիսի քանակով, որը գերազանցում է այդպիսի ապրանքների՝ մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող ակտերով սահմանված մաքսային վճարներից ազատմամբ տեղափոխման նորմերը:

Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրված անմաքս առևտրի խանութներում Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն մեկնող օդանավերի ուղևորներին իրացված օտարերկրյա ապրանքները այդպիսի իրացումից 10 օրացույցային օրվանից ոչ ուշ Հայաստանի Հանրապետությունում ենթակա են ներքին օգտագործման համար բացթողման մաքսային ընթացակարգի տակ դրվելուն առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի վճարման (վճարումից ազատմամբ):

Սույն կետի 1-5-րդ պարբերությունների դրույթները կիրառվում են մինչև Եվրասիական տնտեսական միության Մաքսային օրենսգրքում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում հիմնադրված անմաքս առևտրի խանութների գործունեության կարգի նմանատիպ ամրագրումը:

Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրված անմաքս առևտրի խանութներում Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն մեկնող օդանավերի ուղևորներին իրացված Եվրասիական տնտեսական միության ապրանքների նկատմամբ անմաքս առևտրի մաքսային ընթացակարգն ավարտվում է մաքսային մարմին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ձևով զեկույցի ներկայացմամբ:

Տրանսպորտային միջոցների առնչությամբ մաքսային գործողությունների իրականացման առանձնահատկություններին առնչվող մասով

28. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը ուղևորների և ապրանքների միջազգային փոխադրման իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված և Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունում կամ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունում գրանցված տրնասպորտային միջոցները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են միջազգային փոխադրման տրնասպորտային միջոցներ: Այդ տրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգիքի 48-րդ գլխի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագերի և ակտերի դրույթները:

29. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը ուղևորների և ապրանքների միջազգային փոխադրման իրականացման ժամանակ Հայաստանի Հանրապետությունում գրանցված և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված տրանսպորտային միջոցները Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ճանաչվում են միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցներ: Այդ տրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառվում են Մաքսային միության մաքսային օրենսգիքի 48-րդ գլխի, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ պայմանագերի և ակտերի դրույթներով:

Անձնական օգտագործման ավտոմեքենաների կարգավիճակին առնչվող մասով

30. «Մաքսային միության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների տեղափոխման և

նրանց բացթողման հետ կապված մաքսային ձևակերպումներ իրականացնելու կարգը» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5-րդ հավելվածով սահմանված մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերը Հայաստանի Հանրապետությունում չեն կիրառվում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերում դասակարգվող ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ներմուծվող մարդատար ավտոմեքենաների և շարժիչով մյուս փոխադրամիջոցների (այսուհետ՝ ավտոմեքենաներ) նկատմամբ մինչև Հայաստանի Հանրապետության կողմից մարդատար ավտոմեքենաների և շարժիչով մյուս փոխադրամիջոցների նկատմամբ ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերի կիրառման սկիզբը:

Հայաստանի Հանրապետության կողմից ավտոմեքենաների նկատմամբ Համաձայնագրի 5-րդ հավելվածով հաստատված մաքսատուրքերի, հարկերի դրույքաչափերի կիրառումն ավտոմեքենաների նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

31. Պայմանագրի ստորագրումից հետո երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ավտոմեքենաները, որոնց նկատմամբ մաքսատուրքերը, հարկերը վճարված են Համաձայնագրի 5-րդ հավելվածով սահմանված դրույթաչափերից տարբերվող դրույքաճափերով, ինչպես նաև սույն հավելվածի 30-րդ կետում նշված ավտոմեքենաները Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետություններում ճանաչվում են օտարերկրյա ապրանքներ՝

մինչև Համաձայնագրի 5-րդ հավելվածում նշված դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների և մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների տարբերության չափով մաքսատուրքերի, հարկերի վճարումը,

մինչև Հայաստանի Հանրապետության կողմից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 և 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների և շարժիչով մյուս փոխադրամիջոցների նկատմամբ ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերի կիրառման սկիզբից 3 տարվա լրանալը:

Սույն կետի գործողությունը չի տարածվում Պայմանագրի ստորագրումից հետո ներմուծված ավտոմեքենաների վրա, որոնց նկատմամբ մաքսատուրքերը վճարվել են ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերով:

32. Պայմանագրի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ավտոմեքենաների առնչությամբ դրանց՝ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածք ներմուծման ժամանակ Համաձայնագրի 5-րդ հավելվածում նշված դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների և մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների տարբերությունը կարող է վճարվել Հայաստանի Հանրապետության բյուջե մինչև ներմուծումը Եվրասիական տնտեսական միության այդպիսի այլ անդամ պետությունների տարածք:

33. Սույն հավելվածի 30-րդ և 31-րդ կետերում նշված ավտոմեքենաների նկատմամբ դրանց՝ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածք ներմուծման ժամանակ անցկացվում է մաքսային հսկողություն, իսկ մաքսային վճարների վճարման անհրաժեշտության դեպքում կատարվում են Մաքսային միության մաքսային օրենսգիքով, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագերով և այլ ակտերով սահմանված մաքսային գործողություններ՝ հաշվի առնելով սույն հավելվածի 34-րդ և 35-րդ կետերը:

34. Այն դեպքում, եթե ավտոմեքենաների նկատմամբ սույն հավելվածի 30-րդ և 31-րդ կետերում նշված մաքսատուրքերը, հարկերը մինչև Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածք ներմուծվելը չեն վճարվել Հայաստանի Հանրապետության բյուջե սույն հավելվածի 31-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված չափով, այդպիսի մաքսատուրքերը, հարկերը վճարվում են Եվրասիական տնտեսական միության այն անդամ պետության բյուջե, որի մաքսային մարմնի գործունեության տարածաշրջանում է գտնվում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրը, ուր ժամանել են այդ ավտոմեքենաները:

35. Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված սույն հավելվածի 30-րդ և 31-րդ կետերում նշված ավտոմեքենաները կարող են ժամանակավոր ներմուծվել Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածք միայն Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձանց կողմից առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման և առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման ահահովում մտցնելու: Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածք այդպիսի ավտոմեքենաների ներմուծումն ու օգտագործումն այլ անձանց կողմից, ինչպես նաև դրանց օտարումը, փոխանցումն օգտագործման, տնօրինումը Եվրասիական տնտեսական միության այդ անդամ պետությունների տարածքում թույլ են տրվում միայն այդ պետությունների մաքսային մարմնում դրանց մաքսային հայտարարագրման և մաքսատուրքերի, հարկերի վճարման պայմանով՝ հաշվի առնելով սույն հավելվածի 31-րդ կետը:

36. Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները տեղեկացնում են Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների մաքսային մարմիններին Պայմանագրի ստորագրումից հետո Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ շրջանառության մեջ դրված և հանված ավտոմեքենաների և այդպիսի ավտոմեքենաների առնչությամբ մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների չափի մասին:

37. Մինչև Պայմանագրի ստորագրումը Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ավտոմեքենաները, բացառությամբ սույն հավելվածի 30-րդ և

31-րդ կետերում նշվածների, Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից համարվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ:

Հայաստանի Հանրապետության կողմից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 21 և 8704 31 ապրանքային դիրքերում դասակարգվող մարդատար ավտոմեքենաների և շարժիչով մյուս փոխադրամիջոցների նկատմամբ ԵԱՏՄ ՄՄՍ-ով սահմանված դրույքաչափերի կիրառման երեք (3) տարին լրանալուց հետո սույն հավելվածի 30-րդ և 31-րդ կետերում նշված ավտոմեքենաները ճանաչվում են Եվրասիական տնտեսական միության ապրանքներ անկախ Համաձայնագրի 5-րդ հավելվածում նշված դրույքաչափերով վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարների և մաքսատուրքերի, հարկերի վճարված գումարների տարբերության չափով մաքսատուրքերի, հարկերի Եվրասիական տնտեսական միության այլ անդամ-պետության բյուջե վճարման փաստից:

IV. Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված հարցեր

38. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության միանալու կապակցությամբ անցկացվում են բանակցություններ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամների հետ Հայաստանի Հանրապետության համապատասխան դրույքաչափային պարտավորությունների փոփոխման ուղղությամբ Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոններին, ինչպես նաև «Բազմակողմ առևտրային համակարգի շրջանակներում մաքսային միության գործունեության մասին» 2011 թվականի մայիսի 19-ի պայմանագրի 1-ին հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Նշված բանակցություններն անցկացվում են դրա համար լիազորված պատվիրակության կողմից դիրեկտիվների հիման վրա: Պատվիրակության կազմը և դիրեկտիվները հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից:

Բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները մինչև դրանց վերջնական ընդունումը Առևտրի համաշխարհային կազմակերպությունում հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից:

Նշված պայմանավորվածություններին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության Միասնական մաքսային սակագնում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

39. Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության միանալու համար Աշխատանքային խմբի Զեկույցում նշված Հայաստանի Հանրապետության պարտավորությունները չեն տարածվում Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների նկատմամբ:

V. Մաքսասակագնային կարգավորման հարցեր

40. Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերը, որոնք տարբերվում են ԵԱՏՄ ՄՄՍ մաքսատուրքերի դրույքաչափերից, Հայաստանի Հանրապետության կողմից անցումային շրջանի ընթացքում կիրառվում են Պայմանագրի 4-րդ հավելվածով նախատեսված ցանկի ապրանքների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունը կապահովի այն ապրանքների օգտագործումը, որոնց նկատմամբ միայն իր տարածքում ԵԱՏՄ ՄՄՍ մաքսատուրքերի դրույքաչափերի համեմատ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի առավել ցածր դրույքաչափեր և միջոցներ կձեռնարկի չթույլատրելու այդպիսի ապրանքների արտահանումը Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ՝ առանց ԵԱՏՄ ՄՄՍ դրույքաչափերով հաշվարկված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարի և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակ ներմուծման մաքսատուրքերի գումարի տարբերության վճարման:

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը իրավունք ունեն որոշելու նշված ապրանքների՝ իրենց տարածք մուտք գործելու կարգը:

Վարումը, ներառյալ ապրանքների և դրույքաչափերի ցանկի թարմացումը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են ԵԱՏՄ ՄՄՍ մաքսատուրքերի դրույքաչափերից տարբերվող ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր, Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից իրականացվում է Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի կողմից:

41. Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրված ներմուծման մաքսատուրքերի վճարման արտոնությունները կիրառվում են.

1) Մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում (այդ թվում 2015թ. հունվարի 1-ից հետո այդ միջազգային պայմանագրերի շրջանակներում իրականացվող ծրագրերի)՝ նշված միջազգային պայմանագրերին համապատասխան:

2) «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հայ-հնդկական ուսումնական կենտրոն» ծրագրի իրականացման շրջանակներում՝ մինչև դրա ժամկետի գործողության ավարտը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հայ-հնդկական ուսումնական կենտրոնի ստեղծման մասին» 2009 թվականի հունիսի 26-ի Փոխըմբռնման Հուշագրին համապատասխան:

3) 2013թ. հունիսի 19-ի Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված «Դիլիջանի Միջազգային դպրոց» ծրագրի իրականացման

շրջանակներում – մինչև 2018թ. հունվարի 1-ը՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների, հեծանիվների, ջրային և օդային տրանսպորտի:

42. 2015-2025 թվականների ժամանակահատվածում թույլատրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրական վերամշակման համար 1701 13 և 1701 14 ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ենթակետով եղեգնի շաքարի հումքի (սույն կետում այսուհետ՝ հում-շաքար) ներմուծումը՝ ազատելով ներմուծման մաքսատուրքերի գանձումներից:

Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրական վերամշակման համար շաքարի հումքի ներմուծման պայման է հանդիսանում ներմուծվող շաքարի հումքի նպատակային օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան տրված Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից հաստատման առկայությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շաքար վերամշակող ձեռնարկությունների ապահովման համար:

Հայաստանի Հանրապետությունը տեղեկացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովին արտադրական վերամշակման համար շաքարի հումքի ներմուծման տարեկան ծավալների մասին՝ Հայաստանի Հանրապետությունում շաքարի օգտագործման և գալիք ժամանակահատվածի համար ձևավորվող արտադրության մնացորդի համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է, որ արտադրական վերամշակման համար ներմուծվող շաքարի հումքը, ինչպես նաև սույն կետի 1-ին պարբերությունում նշված դրույքաչափային արտոնությունների կիրառմամբ ներմուծվող շաքարի հումքից պատրաստված սպիտակ շաքարը, չեն փոխադրվի Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածք:

Սույն կետի դրույթները հիմք չեն հանդիսանում Բելառուսի Հանրապետությունից, Ղազախստանի Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից շաքարի ներմուծման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կողմից սահմանափակող միջոցների կիրառման համար:

43. Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից 2 տարվա ընթացքում թույլատրվում է սպիտակ շաքարի ներմուծումը՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1701 99 100 1 և 1701 99 100 9 ենթակետերով, մաքսային արժեքի 10 տոկոսի չափով և ոչ ավել քան տարեկան 4000 տոննա ծավալով ներմուծման մաքսատուրքի վճարմամբ:

Սպիտակ շաքարի ներմուծման պայման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից ներմուծման համար տրված թույլտվությունը:

44. Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ներմուծման մաքսատուրքերից ազատվում են՝

1) ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող ապրանքները, որոնց ներմուծումը Հայաստանի Հանրապետություն իրականացվում է 2015-2022

թվականների ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարիքների ապահովման համար և որոնց համարժեքները չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներում:

Ներմուծման հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից տրված վերջնական օգտագործողի հավաստագիրը:

2) Հայաստանի Հանրապետության տարածքով և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքների միջև միջազգային փոխադրման և (կամ) ներքին փոխադրման համար օգտագործման նպատակներով Հայաստանի Հանրապետություն մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը ներմուծվող քաղաքացիական ուղղաթիռներ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 11 000 1 ենթակետում ներառվող ավել քան 750 կգ առավելագույն քաշով, բայց ոչ ավել քան 3 175 կգ; քաղաքացիական ուղղաթիռներ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 12 000 ենթակետում ներառվող 2000 կգ ավել, սակայն ոչ ավել քան 5000 կգ դատարկ բեռնված սարքավորման զանգվածով և 4000 կգ ավել, սական ոչ ավել քան 10 500 կգ առավելագույն թռիչքային զանգվածով; քաղաքացիական մարդատար ինքնաթիռներ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 20 000 1 ենթակետում ներառվող 2000 կգ ոչ ավել դատարկ բեռնված սարքավորման զանգվածով և 750 կգ ոչ ավել առավելագույն թռիչքային զանգվածով; ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 9 ենթակետում ներառվող 60 000 կգ ավել դատարկ բեռնված սարքավորման զանգվածով ինքնաթիռներ, բայց ոչ ավել քան 90 000 կգ, 120 000 կգ ավել առավելագույն թռիչքային զանգվածով, սակայն ոչ ավել քան 180 000 կգ, քաղաքացիական բեռնատար միջնամայրուղիներ; ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 009 7 ենթակետում ներառվող 160 000 կգ ավել դատարկ բեռնված սարքավորման զանգվածով ինքաթիռներ, քաղաքացիական բեռնատար լայնաֆյուզելյաժային հեռամայրուղիներ ոչ ավել քան 370 000 կգ առավելագույն թռիչքային զանգվածով;

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 5 և 8802 40 003 6 ենթակետերի 110-ից ավել, սակայն ոչ ավել քան 300 մարդ տանող մարդատար տեղերի քանակությամբ մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետություն ներմուծվող քաղաքացիական մարդատար ինքնաթիռներ, որոնք սահմանվում են ծագման երկրի լիազորված մարմնի կողմից տրված հավաստագրի համապատասխան, ինչպես նաև 2017թ. հունվարի 1-ից մինչև 2019թ. հունիսի 30-ը Հայաստանի Հանրապետություն ներմուծվող օդանավերի տարեկան պիտանելիության պահպանման համար պատասխանատու իրավասու մարմնի կողմից հաստատված ուղևորների տեղավորման գծագրին (LOPA) համապատասխան սահմանված 110-ից ավել, սակայն ոչ ավել քան 300 մարդ տանող մարդատար տեղերի քանակությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքով և (կամ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքների միջև միջազգային փոխադրումների և (կամ) ներքին փոխադրումների օգտագործման նպատակով:

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 003 և 8802 40 003 6 ենթակետերի քաղաքացիական մարդատար ինքնաթիռներ, որոնք ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն սույն կետի 5-րդ պարբերությունում նշված արտոնությունների կիրառմամբ և ներմուծվում են Հայաստանի Հանրապետություն դրանց շահագործման ժամկետի ընթացքում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից դուրս տեխնիկական սպասարկումից և վերանորոգումից հետո:

3) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012թ. մարտի 19-ի թիվ 9 որոշմամբ հաստատված երաշխիքային ժամկետի ժամանակահատվածում ատոմային էլեկտրակայանի շինարարության և դրա շահագործման նպատակներով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ցանկի համաձայն՝ երաշխիքային ժամկետի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շինարարության և արդիականացման ու դրա շահագործման նպատակներով Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները:

45. Հայաստանի Հանրապետությունը կապահովի 41, 43 և 44 կետերում նշված սակագնային արտոնությունների կիրառմամբ ներմուծվող ապրանքների օգտագործումը միայն իր տարածքում և քայլեր կձեռնարկի չթույլատրելու Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածքներ այդպիսի ապրանքների ներմուծումը՝ առանց ԵԱՏՄ ՄՄՍ դրույքաչափերով հաշվարկված ներմուծման մաքսատուրքերի և Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքների ներմուծման համար վճարված ներմուծման մաքսատուրքերի գումարների տարբերության վճարման:

46. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը, որոնք նշված են սույն հավելվածում և Պայմանագրի 4-րդ հավելվածում, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի փոփոխության դեպքում կարող են ճշտվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

VI. Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման հարցեր

47. Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների ներդրմանը նախորդող հետաքննության անցկացման համար պատասխանատու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի հայտարարության հիման վրա «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Արձանագրության համապատասխան (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հավելված) կարող է իրականացվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին Եվրասիական տնտեսական միության

գործող հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների նկատմամբ կրկնակի հետաքննություն:

Այդպիսի կրկնակի հետաքննություն սկսելու մասին որոշումը կարող է ընդունվել միայն բավարար ապացույցների առկայության դեպքում այն մասին, որ հետաքննություն անցկացնելու դեպքում Հայաստանի Հանրապետության շուկայի տվյալների հաշվառումը, որի արդյունքում կայացվել է գործող հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցների կիրառման մասին որոշում, կբերի համապատասխան միջոցների ներդրման համար հիմքերի էական փոփոխության:

Սույն կետի 1-ին պարբերությունում նշված կրկնակի հետաքննության նկատմամբ չեն կիրառվում «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին» Արձանագրության 35-րդ, 110-րդ և 175-րդ կետերի դրույթները (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հավելված), որոնք սահմանում են նվազագույն ժամկետ, որի լրանալուն պես կարող է սկսվել կրկնակի պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման հետաքննություն:

Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անցկացվող հետաքննության արդյունքներով Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո ընդունված հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցների կիրառման մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումները ենթակա են Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջական կիրառման և կարող են վերանայվել սույն կետի 1-3-րդ պարբերություններում նշված կարգի համաձայն:

Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից որպես հատուկ պաշտպանական միջոցներ սահմանված ներմուծման քվոտաների չափերը, ենթակա են շտկման՝ հաշվի առնելով երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետություն 2011-2013 թվականների ժամանակահատվածում համապատասխան ապրանքների ներմուծման ծավալները:

VII. Տեխնիկական կարգավորման հարցեր

48. Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 53-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին պարբերության դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից 12 ամիս հետո, բացառությամբ Մաքսային միության հետևյալ տեխնիկական կանոնակարգերի, որոնց նկատմամբ սահմանվում են նշված դրույթների ուժի մեջ մտնելու հետևյալ ժամկետները.

24 ամիս հետո՝

«Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 010/2011).

«Կահույքի արտադրանքի անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 025/2012).

«Գյուղատնտեսական և անտառատնտեսական տրակտորների և նրանց կցասայլերի անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 031/2012).

48 ամիս հետո՝

«Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 014/2011).

60 ամիս հետո՝

«Անիվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 018/2011):

Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի դրույթների հետ միասին թույլատրվում է կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերը.

Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 12 ամսվա ընթացքում՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կարգավորման օբյեկտների նկատմամբ (բացառությամբ «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 010/2011), «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 014/2011), «Անիվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 018/2011), «Կահույքի արտադրանքի անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 025/2012), «Գյուղատնտեսական և անտառատնտեսական տրակտորների և նրանց կցասայլերի անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 031/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի),

Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 24 ամսվա ընթացքում՝ «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 010/2011), «Կահույքի արտադրանքի անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 025/2012), «Գյուղատնտեսական և անտառատնտեսական տրակտորների և նրանց կցասայլերի անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 031/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի տեխնիկական կարգավորման օբյեկտների նկատմամբ),

Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 48 ամսվա ընթացքում՝ «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 014/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտների նկատմամբ,

Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 60 ամսվա ընթացքում՝ «Անիվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՏՊ ՏՀ 018/2011) Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտների նկատմամբ:

49. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին Հայաստանի Հանրապետությունում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի գործողության մեջ դնելու կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով այն, որ նախկինում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ սահմանված Մաքսային միության այդպիսի տեխնիկական կանոնակարգերի անցումային դրույթների ժամկետները երկարաձգվում են 6-ից մինչև 24 ամիս ժամկետով:

50. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին Արձանագրության 7-րդ կետի համապատասխան ձևավորվող արտադրանքի միասնական ցանկ ընդգրկված արտադրանքի նկատմամբ (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 9-րդ հավելված) մինչև համապատասխան տեխնիկական կանոնակարգերի ուժի մեջ մտնելը, գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

51. Սույն հավելվածի 49-51-րդ կետերի դրույթները տարածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության համար նախատեսված արտադրանքի վրա:

52. Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան տեխնիկական կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատումը իրականացնում են համապատասխանության գնահատում իրականացնող մարմինները, որոնք հավատարմագրված են Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 54-րդ հոդվածով նախատեսված կարգով և պայմաններով:

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան տեխնիկական կարգավորման օբյեկտների գրանցումը (պետական գրանցումը) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան նշված աշխատանքների անցկացման համար լիազորված մարմինները:

VIII. Սանիտարական, անասնաբուժասանիտարական և կարանտինային բուսասանիտարական միջոցների հարցեր

53. Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի կամ միասնական սանիտարա-համաճարակային ու հիգիենայի պահանջներին համապատասխան արտադրանքի (ապրանքների) պետական գրանցումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան բնակչության սանիտարա-համաճարակային բարեկեցության ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազորված մարմինները:

54. Հայաստանի Հանրապետությունում համատեղ ստուգումների (զննում), աուդիտի հետ կապված ծախսերի ֆինանսավորումը իրականացվում է համապատասխան բյուջեների միջոցների կամ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ չարգելվող այլ միջոցների հաշվին, եթե այլ կարգ համաձայնեցված չէ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

IX. Սպառողների իրավունքների պաշտպանության հարցեր

55. Հայաստանի Հանրապետությունում «անորակ ապրանքներ» նշանակում է ապրանքներ, որոնք չեն համապատասխանում անվտանգության ստանդարտներին և նորմերին:

X. Ծառայությունների առևտրի, ներդրումների հիմնադրման, գործունեության և իրականացման կարգավորման հարցեր

56. «Ծառայությունների առևտրի, ներդրումների հիմնադրման, գործունեության և իրականացման մասին» արձանագրության (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հավելված) 15-17, 23, 26, 28, 31, 33 և 35 կետերով նախատեսված սահմանափակումները, բացառությունները, լրացուցիչ պահանջները և պայմանները (բացառությամբ հորիզոնականներից) կիրառվում են Բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից նշված Արձանագրության 2-րդ կետի 4-րդ պարբերության համապատասխան Հայաստանի Հանրապետության համար սահմանափակումների անհատական ազգային ցանկի, բացառությունների, լրացուցիչ պահանջների և պայմանների հաստատման ժամկետից:

57. Հայաստանի Հանրապետության համար սահմանափակումների անհատական ազգային ցանկը, բացառությունները, լրացուցիչ պահանջները և պայմանները հաստատվում են Բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից՝ «Ծառայությունների առևտրի, ներդրումների հիմնադրման, գործունեության և իրականացման մասին» արձանագրության 2-րդ կետի 4-րդ պարբերության համապատասխան (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հավելված), Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3 ամսից ոչ ուշ:

58. Ծառայությունների ոլորտների ցանկը, որոնցում «Ծառայությունների առևտրի, ներդրումների հիմնադրման, գործունեության և իրականացման մասին» արձանագրության 40-րդ կետով նախատեսված գործում է ծառայությունների միասնական շուկան, հաստատվում է Բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3 ամսից ոչ ուշ:

59. Ծառայությունների ոլորտների (ենթաոլորտների) ցանկը, որոնցով ծառայությունների միասնական շուկայի ձևավորումը կիրականացվի ազատականացման պլանների համապատասխան (անցումային

ժամանակահատվածի ընթացքում) հաստատվում է Բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի կողմից Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3 ամսից ոչ ուշ:

XI. Անուղղակի հարկերի գանձման հետ կապված հարցեր

60. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքից ներմուծված (ներմուծվող) և 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությանը համապատասխան մաքսային ընթացակարգերի, ռեժիմների և ձևակերպումների ներքո տեղադրված ապրանքների նկատմամբ անուղղակի հարկերի գանձումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից:

Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարկային մարմինների միջև էլեկտրոնային ձևով տեղեկատվական փոխանակման հարցերը փոխադարձ առևտրի իրականացման դեպքում կկարգավորվեն «Մաքսային միության անդամ պետությունների հարկային մարմինների միջև էլեկտրոնային ձևով անուղղակի հարկերի վճարված գումարների մասին տեղեկատվության փոխանակման մասին» 2009 թվականի դեկտեմբերի 11-ի արձանագրությունում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության ընդունման եղանակով, որը ուժի մեջ կմտնի Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից ոչ ուշ:

61. Այն ապրանքների նկատմամբ փոխադարձ առևտրում, որոնց նկատմամբ մինչև 2015թ. հունվարի 1-ը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնին ներկայացվել է նախնական հայտարարագրում և հայտարարագրողի կողմից վճարվել են անուղղակի հարկերը, 2015 թվականի հունվարի 1-ից հետո բեռնաթափված այդպիսի ապրանքներ արտահանողների կողմից «Անուղղակի հարկերի գանձման կարգի և ապրանքների ներմուծման ու արտահանման, աշխատանքների իրականացման, ծառայությունների մատուցման դեպքում դրանց վճարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմի մասին» արձանագրության 4-րդ կետով (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ հավելված) նախատեսված ԱԱՀ զրոյական դրույքաչափի կիրառման հիմնավորվածությունը հաստատելու և (կամ) փաստաթղթերի փաթեթով ակցիզների վճարումից ազատելու համար, հարկային մարմին ապրանքների ներմուծման և անուղակի հարկերի վճարման հայտարարության փոխարեն ներկայացվում է ազատ շրջանառության մեջ ապրանքների բացթողման կապակցությամբ ձևակերպված մաքսային հայտարարագրի պատճենը:

XII. Բնական մենաշնորհի ոլորտի կարգավորման հարցեր

62. Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի XIX բաժնի դրույթները տարածվում են «Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 20-րդ հավելված) 1-ին հավելվածում նշված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև առևտրի վրա ազդեցություն ունեցող բնական մենաշնորհի ոլորտում Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհի սուբյեկտների, սպառողների, գործադիր իշխանության մարմինների, պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ հարաբերությունների վրա:

63. Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հանրային ծառայությունները «Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի աայմանագրի 20-րդ հավելված) 1-ին և 2-րդ հավելվածների համապատասխան հավասարեցվում են բնական մենաշնորհի ծառայություններին: Նշված հանրային ծառայությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի դրույթները, որոնք կարգավորում են բնական մենաշնորհների ծառայությունները:

XIII. Էներգետիկայի ոլորտի կարգավորման հարցեր

64. Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի XX բաժնի դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են անդամ պետությունների միջև էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական փոխանցման իրականացման Մեթոդաբանության մասով նշված Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության համապատասխան, որն ուժի կմտնի 1 տարուց ոչ ուշ Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետից:

XIV. Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության և պահպանության հարցեր

65. «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանության և պահպանության մասին» Արձանագրության (Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 26-րդ Հավելված) V բաժնի դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3 տարին լրանալուց հետո:

66. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է միջոցների ձեռնարկում՝ թույլ չտալու համար երրորդ երկրներից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված և Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային գրանցամատյանում և ապրանքների առաքման երկրի մտավոր սեփականության օբյեկտների մաքսային գրանցամատյանում ներառված ապրանքային նշաններով մակնշված ապրանքների արտահանումը Հայաստանի Հանրապետության տարածքից Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների տարածք՝ առանց իրավատիրոջ համաձայնության:

67. Հայաստանի Հանրապետությունը ոչ ուշ քան Պայմանագրի ուժի մեջ մտնելու ժամկետը, կմշակի և կհաստատի Մաքսային միության անդամ պետությունների մտավոր սեփականության օբյեկտների միասնական մաքսային գրանցամատյանում և ապրանքների առաքման երկրի մտավոր սեփականության օբյեկտների մաքսային գրանցամատյանում ներառված ապրանքային նշաններով մակնշված ապրանքների արտահանման նկատմամբ վերահսկողության կարգ սահմանող նորմատիվ իրավական ակտ:

68. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 6 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունը կմշակի և կհաստատի Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի սպառման տարածաշրջանային սկզբունքի գործողության պայմաններում գործունեության իրականացմանը տնտեսվարող սուբյեկտների հարմարվելուն ուղղված միջոցառումների պլան:

69. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է սույն հավելվածի 66-րդ կետով նախատեսված պարտավորությունների իրականացման մշտադիտարկման անցկացումը և Հայաստանի Հանրապետության ու Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ վիճակագրական տվյալների ներկայացումը Եվրասիական տնտեսական հանձնաժողով, այդ թվում Հայաստանի Հանրապետության ծագման ապրանքների նկատմամբ, բայց ոչ պակաս քան եռամսյակը մեկ անգամ:

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը իրավունք ունեն նախաձեռնել սույն հավելվածի 65-րդ կետով նախատեսված անցումային դրույթը Հայաստանի Հանրապետության համար վաղաժամ չեղյալ հայտարարելու մասով Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին ընթացակարգ՝ Հայաստանի Հանրապետությունից Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածք տարեկան արտահանման կառուցվածքում երրորդ երկրներում արտադրվող ապրանքների 15-տոկոսանոց մասնաբաժինը գերազանցելու դեպքում: